

Կրտսեր դպրոցականների մետաճանաչողական գործընթացների կառավարման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը

Էմմա Կոստանյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-228>

Հանգուցային բառեր. մետաճանաչողություն, կրտսեր դպրոցական, ճանաչողություն, ուսուցում, դասավանդման մեթոդներ

Նախաբան

Մենք հաճախ գիտակցում ենք, որ երբեմն լավագույն որոշումը երկու տարբերակներից մեկը ընտրելը չէ կամ դանդաղ պատասխանելը և որոշում կայացնելու համար խորհուրդ հարցնելը: Մեր դատողությունները հիմնված են նրա վրա, թե որքանով ենք մենք տեղակայված, և որքանով են դրանք հիմնավոր, ինչն էլ որոշումներ կայացնելու դեպքում բերում է ինքնավստահության՝ կախված նրանից, թե որքանով ենք մենք գիտակցում, թե տեղեկություն ինչ ծավալի ենք ծանոթ, որքանով ենք կարողանում օգտվել մեր ունեցած գիտելիքից: Այս կարողությունը, որն անվանվել է մետաճանաչողություն, երբեմն սահմանվում է որպես «մտածողություն մտածողության մասին», բայց նաև վերաբերում է կառավարմանը: Մետաճանաչողական գործընթացների կառավարման վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ, որոնք ի ցույց են դնում կրթության մարտահրավերներին դիմակայելու եղանակներ:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրության նպատակն է պարզել մետաճանաչողական գործընթացների կառավարման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, կատարել առկա մոտեցումների վերլուծություն:

Հետազոտության նորայլը: Հանգամանորեն ներկայացնելով առկա մոտեցումները՝ բացահայտել կրտսեր դպրոցականների մետաճանաչողական գործընթացների կառավարման բաղադրիչները:

Հետազոտության մեթոդները: Ուսումնասիրությունը կատարվել է նկարագրական, համեմատության, հակադրության և վերլուծության մեթոդներով:

Ավելի քան 40 տարի է, որ մետաճանաչողություն հասկացությունն առաջին անգամ ներդրվել է Ֆլավելի կողմից: Հետագա տարիներին բազմաթիվ երևույթներ ներկայացնող մետաճանաչողությունը ուսումնասիրվել է և կիրառվել հոգեբանական հետազոտություններում: Այնուամենայնիվ, դեռևս կան հիմնախնդիրներ, որոնք պահանջում են մեր ուշադրությունն ու առաջ բերում մարտահրավերներ ապագա հետազոտության համար [3]:

Կրթության մեջ մետաճանաչողություն հասկացությունը ներդնողները այն սահմանում են որպես ճանաչողության ճանաչողության մասին, որն ունի երկու գործառույթ՝ մշտադիտարկման և ճանաչողության կառավարման: Այնուամենայնիվ, ճանաչողության և մետաճանաչողության տարբերությունը դժվար է սահմանել, և մետաճանաչողական երևույթների բազմազանությունը ենթադրում է այն մեկնաբանելու տարբեր մեխանիզմների առկայություն:

Ըստ Մքոթի և Դիսնեյի տեսության՝ գիտակցված և չգիտակցված գործողությունները բերում են մետաճանաչողական գործընթացների կառուցման: Նրանք պաշտպանում են այն տեսակետը, որ ուսուցումը պետք է կազմակերպել՝ անձանթ իրավիճակներ ստեղծելով, ոչ թե բացահայտ ուսուցմամբ: Ուսուցումը, որը կազմակերպվում է առանց սովորողին նոր ուսումնական նյութի բացահայտմանը մասնակից դարձնելու, ըստ Մքոթի և Դիսնեյի


տեսության, արդյունավետ չէ: Ըստ տեսաբանների՝ ուսուցումը կարելի է կազմակերպել սովորողին արդեն ծանոթ, հայտնի իրավիճակներով, սակայն դրանց հիմքում որևէ հարցի, խնդրի լուծման պահանջ ներկայացնելով: Օրինակ՝ կրտսեր դպրոցականին տեքստային խնդիրներ լուծելիս առաջարկվում է ոչ թե ներկայացնել տեքստային խնդրի լուծման քայլաշար, այլ բացահայտել քայլաշարը սովորողի հետ համատեղ՝ համապատասխան հարցադրումներ կատարելով: Եթե տեքստային խնդիր լուծելիս սովորողը դժվարանում է կազմել քայլաշար, կարելի է կատարել հարցադրումներ, որոնք բացահայտում են սովորողի դժվարությունները: Մքոթի և Դիսնեյի մոդելը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով [4].

Աղյուսակ 1.

Մքոթի և Դիսնեյի տեսության մոդել

Գիտակցված գործողություններ	Չգիտակցված գործողություններ
<p>Սովորողը կարողանում է նկարագրել, թե ինչն է հասկացել, յուրացրել, կարողանում է օրինակներ բերել: Սովորողը նաև այս փուլում կարողանում է նկարագրել, թե ինչ դժվարություններ ունի ուսումնական նյութի յուրացան հետ կապված:</p>	<p>Սովորողը տեղեկացվածություն չունի այդ գործընթացների վերաբերյալ, որոնց օգնությամբ ձևավորվում է գիտելիքը:</p>

Մքոթի և Դիսնեյի տեսությանը հաջորդում է Էվկլիդեսի տեսությունը: Սովորաբար մարդիկ որևէ խնդիր լուծելիս դժվարությունների հանդիպելիս այն վերագրում են խնդրին: Նույն առաջադրանքը մի անձի համար կարող է լինել բարդ, մյուսի համար՝ հեշտ: Ըստ Էվկլիդեսի՝ դժվարությունը հանդիսանում է միջնորդ՝ խնդրի և այն անձի միջև, ով ցանկանում է լուծել այն [1]: Ավելին, երբ աշակերտը հանդիպում է դժվարությունների, դրանք բացասական զգացողություններ են առաջացնում և պահանջում որոշակի ջանքեր, ռազմավարություններ՝ այն լուծելու համար: Էվկլիդեսի մոդելը կարելի է պատկերել հետևյալ գծապատկերի միջոցով [2].



Աղյուսակ 2. Էվկլիդեսի խնդիրների լուծման մոդելը

Էվկլիդեսը և Թուրոթօղլուն ավելի մանրամասն են անդրադառնում մետաճանաչողության և ճանաչողության տարբերությանը: Հեղինակները հղում են տալիս այլ տեսության՝ մտային քարտեզներ կազմելու փորձին: Խնդիրների լուծման նպատակով երկարատև հիշողությունից որևէ բան մտաբերելու համար նրանք առաջարկում են մտային քարտեզները, ինչի օգնությամբ հիշողությամբ նյութի վերհիշումը ավելի արագ է կատարվում [2]:

Ըստ Ջեյմսի՝ գիտակցականությունը ենթադրում է ավելին, քան տեղեկացված լինելը: Հենց սրանով էլ ընդգծվում է մետաճանաչողության դերը, երբ անձը իրագրել է երևել երևույթի մասին, և երբ անձը քննում է այդ երևույթի հասկանալի կամ անհասկանալի լինելը: Այն սովյալ նյութը հասկանալու և չհասկանալու միջև հանդիսանում է կամուրջ՝ անցումային եզր [4]:

Կինունեն և Վորասը կատարել են ուսումնասիրություններ, որոնք բացահայտում են


մետաբոլիզմը՝ ընթերցված նյութի բովանդակության շուրջ: Նրանք մետաբոլիզմը գնահատելու համար օգտագործել են տեղեկույթի նկատմամբ վերաբերմունքով՝ կողմ կամ դեմ, և օգտագործել են մեթոդներ, որոնք թույլ են տալիս մետաձանաչողական գործընթացների կառավարում և ընթերցած նյութը հասկանալու կարողության կարգավորում:

Ըստ Նորմանի, Փրիսի և Դաֆֆի տեսության՝ գիտելիքի բովանդակությունից ելնելով՝ այլ գիտելիքի փոխակերպումը ենթադրում է մետաձանաչողական հմտությունների առկայություն: Այն ենթադրում է առկա գիտելիքը գործածության մեջ դնելը, կիրառական մակարդակի հասնելը [4]:

Ըստ վերը նշված մոտեցումների վերլուծության՝ ներկայացնում ենք կրտսեր դպրոցականների մետաձանաչողական գործընթացների կառավարման բաղադրիչները.

Աղյուսակ 3.

Կրտսեր դպրոցականների մետաձանաչողական գործընթացների կառավարման բաղադրիչները



Եթե համեմատություն կատարենք՝ գիտակցականության և փորձի վրա հիմնված մետաձանաչողական զգացողությունների տեսությունների միջև, ապա կարող ենք ասել, որ սրանք ունեն որոշ ընդհանրություններ. դրանք երկուսն էլ իրականացնում են մետաձանաչողական գործառույթ՝ գիտակցված մետաձանաչողական ազդանշան են, որն արտացոլում է չգիտակցված ձանաչողական ակտիվություն [5]:

Եզրակացություն

Ըստ կատարված ուսումնասիրության՝ կարող ենք նշել, որ կրտսեր դպրոցականների մետաձանաչողական գործընթացների կառավարման հայեցակարգերում առավել կարևորվում են երեխաների դատողությունները՝ ուսումնասիրվող նյութի շուրջ, ինչը ենթադրում է տարրական դպրոցում մեխանիկական աշխատանքների բացառում, ուսումնասիրվող նյութի արդիականության քննարկում, դասավանդման այնպիսի ռազմավարություններ, որոնք զարգացնում են աշակերտների մետաձանաչողական հմտությունները:

Գրականություն

1. Efklides, A. The systemic nature of metacognitive experiences: feelings, judgments, and their interrelations. In M. Izaute, P. Chambres, & P.-J. Marescaux (Eds.), *Metacognition: Process, function, and use* Dordrecht, The Netherlands: Kluwer, 2002, pp. 19-34.
2. Efklides, A. Metacognition and Affect: What can metacognitive experiences tell us about the learning process? *Educational Research Review (1)*, 2006, pp. 3-14.
3. Flavell, J. H. Metacognition and Cognitive Monitoring: A new area of cognitive-developmental inquiry. *American Psychologist (34)*, 1979, pp. 906-911.
4. James, W. *The Principles of Psychology*, Vol. 1. New York: Holt, 1890.
5. Price, M. C. & Norman, E. Intuitive decisions on the fringes of consciousness: are they conscious and does it matter? *Judgment and Decision Making (3)*, 2008, pp. 28-41.

Анализ концептуальных подходов к мониторингу метакогнитивных процессов младших школьников

Эмма Костянян

Резюме

Ключевые слова: метакогнитивность, младший школьник, познание, обучение, методы обучения

Во время учебного процесса при изучении различных учебных дисциплин младшие школьники сталкиваются с рядом трудностей, связанных как с получением новых видов заданий, так и с попытками ориентировки в незнакомых ситуациях. Изучая существующие подходы, мы приходим к выводу, что для обеспечения познавательного уровня младших школьников необходимо управлять метакогнитивными процессами. Эти процессы подразумевают такие механизмы, при выполнении которых школьник имел развитые навыки, осознанно выбирал и выполнял действия, которые приведут к решению поставленных задач и к выявлению соответствующих ответов на заданные вопросы. В данной статье метакогнитивные процессы рассматриваются не в контексте одного учебного предмета, а в контексте всех учебных дисциплин, которые преподаются в начальной школе. Благодаря метакогнитивным процессам важна и межпредметная связь в дисциплинах, развивающихся в начальной школе. Благодаря метакогнитивным навыкам младшие школьники способны применять знания об одном предмете в контексте другого.

Одним из составляющих управления метакогнитивными процессами младших школьников является развитие навыков дискуссионного понимания нового учебного материала, исключая механический процесс. В контексте управления метакогнитивными процессами у младших школьников возникают такие способности, с помощью которых они не только усваивают учебный материал, но и создают среду для закрепления своих знаний.

The Analysis of Conceptual Approaches to the Monitoring of Metacognitive Processes of Junior Schoolchildren

Emma Kostanyan

Summary

Key words: *metacognition, junior schoolchild, cognition, teaching, teaching methods*

It is quite natural that in the educational process, within various academic subjects, the junior schoolchildren face a number of such difficulties as new types of tasks, mixed orientations in unfamiliar situations and so on. When we conduct research on the existing approaches, we come to the conclusion that it is necessary to manage metacognitive processes in order to ensure the cognitive level of junior schoolchildren. Those processes imply mechanisms in which the student has developed certain skills, as s/he consciously selects and performs actions that will lead to solving the assigned problems and identifying appropriate answers to the questions asked. In this article metacognitive processes are discussed not in the context of one academic subject, but in the context of all the academic subjects that are taught in elementary school. Due to metacognitive processes, the interdisciplinary ties within the subjects developing in the elementary school is also important. In addition, due to the metacognitive skills, the junior schoolchildren are able to apply the knowledge about one subject in the context of another subject.

One of the components of managing the metacognitive processes of junior schoolchildren is the development of skills for the controversial understanding of new academic material, which excludes mechanical process. In the context of managing metacognitive processes, junior schoolchildren develop abilities with the help of which they not only learn academic material, but also create an environment for consolidating their knowledge.

Ներկայացվել է 15.10.2023 թ.
Գրախոսվել է 26.10.2023 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.